ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հոկտեմբերի 2017 թվականի N 201-Ա

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, ***որոշում եմ.***

1. 2017 թվականի նոյեմբերի 5-ին նշանակված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղերն են՝ Մելքոնյան փողոցի թիվ 79, 6-րդ փողոցի թիվ 39 և 20-րդ փողոցի թիվ 1 հասցեներում գտնվող ցուցատախտակները:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հոկտեմբերի 2017 թվականի N 202-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել անհատ Սաթիկ Ռազմիկի Աչիկյանին, մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով Ջրվեժի 10-րդ փողոցի թիվ 3/1 հասցեում:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Սաթիկ Ռազմիկի Աչիկյանին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 2.
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N 203-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Թույլատրել քաղաքացի Ռուզան Գառնիկի Պողոսյանին քանդելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 3-րդ փողոցի թիվ 50 հասցեի տնամերձ հողակտորում գտնվող թիվ 2 կաթսայատունը՝ 2,8 քառ.մետր մակերեսով և թիվ 1 բնակելի տնից թիվ 4 սենյակը՝ 15,0 քառ.մետր, թիվ 5 սենյակը՝ 13,2 քառ.մետր և թիվ 6 սենյակը՝ 22,7 քառ.մետր մակերեսներով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N 204-Ա

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, Ջրվեժ համայնքի 16-րդ, 24-րդ փողոցների և 19-րդ փողոցի մի հատվածի ասֆալտապատման ավարտված շինարարական աշխատանքների շահագործման ընդունելու նպատակով, ***որոշում եմ.***

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Մարգարյան Արամազդ	- Աշխատակազմի առաջատար մասնագետ (նախագահ, գնումների պատասխանատու ստորաբաժանման ղեկավար),
«Արցախճան» Ինստիտուտ ՓԲԸ-ի ներկայացուցիչ	- Հեղինակային հսկողություն իրականացնող (համաձայնությամբ),
«Սեյսմաանվտանգություն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ	- Հեղինակային հսկողություն իրականացնող (համաձայնությամբ),
«ՀՀ նախագծերի պետական արտագե-ռատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ	- Տեխնիկական հսկողություն իրականացնող (համաձայնությամբ),
Քաղաքաշինական պետական տեսչության Կոտայքի տարածքային բաժնի ներկայացուցիչ	- Վերահսկողություն իրականացնող (համաձայնությամբ),
Տիգրան Նազարյան	- «ՇԻՆՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի տնօրեն (գլխավոր կապալառու):

2.Հանձնարարել հանձնաժողովին, ուսումնասիրելու և կազմելու ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտը:

3.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Գարեգին Բաղալյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» հոկտեմբերի 2017 թվականի N 205-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի 16-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 8 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 964,72 քառ.մետր մակերեսով հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների՝ բնակելի տան՝ 49,13 քառ.մետր, կիսանկուղի՝ 64,44 քառ.մետր, օժանդակ շինության՝ 27,07 քառ.մետր և թվով երեք ծածկարանների՝ 17,12 քառ.մետր, 4,89 քառ.մետր և 19,18 քառ.մետր արտաքին մակերեսներով, պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ջրվեժի 16-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 8 հասցեում գտնվող 964,72 քառ.մ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համարել փոխված բնակավայրի բնակելի կառուցապատման:

2. Համայնքի 16-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 8 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող 964,72 քառ.մետր մակերեսով հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները՝ բնակելի տունը՝ 49,13 քառ.մետր, կիսանկուղը՝ 64,44 քառ.մետր, օժանդակ շինությունը՝ 27,07 քառ.մետր և թվով երեք ծածկարանները՝ 17,12 քառ.մետր, 4,89 քառ.մետր և 19,18 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը (կցվում են հողամասի և շինությունների հատակագծերը):

3. Դիմել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ 16-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 8 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Սյուզաննա Ռուբենի Շախկյանին:

5. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 4
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» հոկտեմբերի 2017 թվականի N 206-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Արտակ Մանվելի Երանոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 44-րդ փողոցի թիվ 69 հասցեի տնամերձ հողակտորում տալ բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Արտակ Մանվելի Երանոսյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 6
գ. Ջրվեժ